Արձանագրության 3

«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/17» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան12.02.2020թ.

Ժամը՝ 09:30

Մասնակցումէին

Հանձնաժողովինախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/

Հանձնաժողովիանդամներ՝ Ա. Հարությունյան /գնահատող/, Ա. Սարգսյան /գնահատող/, Ռ. Աբրահամյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/

Հանձնաժողովիքարտուղար՝ Ս. Եղիազարյան

1.Անհամապատասխանությունը շտկելու մասին

(Ա. Կիրակոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել է հայտում առկա անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Գանահատող հանձնաժողովը հիմք ընդունելով << կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է **օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա»** որոշեց նիստը կասեցնել է, և հանձնարարել գնման ընթացակարգի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

3.2 Գնման ընթացակարգը ընդհատել մինչև բանակցությունների նպատակով հրավիրված հանձնաժողովի նիստը, որը տեղի կունենա 14.02.2020թ. ժամը 12:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 321 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 14.02.2020թ. ժամը 12:00-ին,Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 321 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Ա. Հարությունյան

---------- Ա. Սարգսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ ---------- Ս. Եղիազարյան